ԳՈՒՐԳԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր
կենտրոնական վիճակագրական վարչության պետ
(1961-1981թթ.)

Գուրգեն Արտաշեսի Փահլևանյանը ծնվել է 1908թ. փետրվարի 23-ին՝ Կարս քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում:

1931թ. ավարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոտեխնիկայի ֆակուլտետն՝ աշխատանքի է անցել Հայաստանի ջրային տնտեսության համակարգում:

1935-1937թթ. գլխավորել է Աշտարակի և Էջմիածնի շրջանային ջրմուղների կառուցման աշխատանքները:

1937-1939թթ. աշխատել է Արտաշատի ջրանցքի շինարարությունում սկզբում որպես պետի տեղակալ, ապա կառույցի պետ:

1939թ. նշանակվել է հանրապետության ջրային տնտեսության ժողկոմի տեղակալ:

1940թ. նշանակվել է ՀԽՍՀ ջրատնտեսության ժողկոմի տեղակալ:

1941-1945թթ. Փահլևանյանն ակտիվ մասնակցություն է ունեցել Հայրենական մեծ պատերազմին:

1946թ. զորացրվել է խորհրդային բանակից և 1947թ. նշանակվել ՀԽՍՀ կոմունալ տնտեսության նախարար (պաշտոնավարել է մինչև 1950թ.-ը):

1950թ. ընտրվել է Երևանի Օրջոնիկիձեի կոմունիստական կուսշրջկոմի քարտուղար, որից հետո մինչև 1953թ.-ը՝ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի առաջին տեղակալ:

1953թ. ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի երկրորդ, իսկ 1954թ. մայիսին՝ առաջին քարտուղար:

1957-1960թթ. աշխատել է որպես Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ:

1961թ. նշանակվել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր կենտրոնական վիճակագրական վարչության պետ, որտեղ և աշխատել է մինչև 1981թ., որից հետո անցել վաստակած կեսաթոշակի:

Գ.Փահլևանյանը բազմիցս ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Նա երկար տարիներ եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամ, արժանացել է հանրապետության «Վաստակավոր շինարարի» կոչման, պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով:

Գուրգեն Փահլևանյանը վախճանվել է 1986 թվականին: